ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 դեկտեմբերի 2023 թվականի N 2144-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1343-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 3.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության տրամադրման միջոցառման իրականացման անհրաժեշտ բազային պահանջները, օժանդակության տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» N 1343-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետը «պայմանները» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ միջոցառում)» բառերով:

2. Որոշումն 1-ին կետից հետո լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1. Սահմանել, որ՝

1) այն ծրագրերը, որոնք աջակցություն են ստացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» N 276-Լ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 532-Լ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 1867-Ն որոշումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ներդրումային (անշարժ գույքի կառուցման կամ վերակառուցման) ծախսերի մասնակի փոխհատուցման շրջանակում, չեն կարող օժանդակություն ստանալ սույն միջոցառման շրջանակում.

2) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով ստեղծվում է օժանդակության տրամադրման նպատակով սույն որոշման շրջանակներում ֆինանսական օժանդակություն ստացող տնտեսավարող սուբյեկտի կողմից ներդրումների կատարման և ենթակառուցվածքի (ենթակառուցվածքների) կառուցման համապատասխան հիմնավորումներով անհրաժեշտության փաստը հավաստող փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրման միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):»:

3. Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ստեղծել սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հանձնաժողովն ու հաստատել դրա անհատական կազմը և աշխատակարգը:

5. Սահմանել, որ՝

1) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը որոշման շրջանակում կոնկրետ ներդրումային ծրագրին հավանություն տալու և օժանդակություն տրամադրելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կայացված որոշումներով, եթե անգամ այդ որոշումները հետագայում համարվել են ուժը կորցրած, նախատեսված ներդրումային ծրագրերի համար օժանդակության տրամադրումն իրականացվելու է սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հավելվածով սահմանված միջոցառմանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված մոտեցումները, իսկ միջոցառման շրջանակում օժանդակություն տրամադրելու նպատակով սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հավելվածի 3-րդ կետով սահմանված ներդրումների ծավալ են համարվելու որոշումն ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից հետո ծրագրերի իրականացման նպատակով կատարված ներդրումները.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված ներդրումային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ կնքում է սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հավելվածի 15-րդ կետով սահմանված պայմանագիրը՝ հիմք ընդունելով սույն կետի 1-ին ենթակետի պայմանը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի N 1233-Ա, 2023 թվականի հուլիսի 20-ի N 1243-Ա և 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1334-Ա որոշումներով հավանություն տրված ներդրումային ծրագրերի շրջանակում իրականացված ներդրումների կատարման հաշվետվությունները մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի N 1243-Ա որոշման դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հաստատված լինելու դեպքում հաստատված հաշվետվությունը հիմք է հանդիսանում սույն որոշման շրջանակում օժանդակության տրամադրման համար և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի

հուլիսի 20-ի N 1233-Ա, 2023 թվականի հուլիսի 20-ի N 1243-Ա և 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1334-Ա որոշումներով հավանություն տրված ներդրումային ծրագրեր իրականացնող կազմակերպությունները լրացուցիչ չեն ներկայացնում սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հավելվածի 20-րդ կետով սահմանված՝ իրականացված ներդրումների մասին հաշվետվությունը: Իսկ եթե մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և (կամ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հաստատված հաշվետվություն առկա չէ՝ վերը նշված կազմակերպություններն օժանդակություն ստանալու նպատակով ներկայացնում են իրականացված ներդրումները և կառուցված ենթակառուցվածքի վրա կատարված ծախսերը հիմնավորող հաշվետվություն, որը պետք է կազմված և հաստատված լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպության կողմից.

4) եթե սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և (կամ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հաստատված հաշվետվությունը չի ներառում կառուցված ենթակառուցվածքի վրա կատարված ծախսերը, ապա օժանդակության ստացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի N 1233-Ա, 2023 թվականի հուլիսի 20-ի N 1243-Ա և 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1334-Ա որոշումներով հավանություն տրված ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպությունները պետք է ներկայացնեն միայն կառուցված ենթակառուցվածքի վրա կատարված ծախսերը հիմնավորող հաշվետվություն, որը պետք է կազմված և հաստատված լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպության կողմից.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի N 1233-Ա, 2023 թվականի հուլիսի 20-ի N 1243-Ա և 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1334-Ա որոշումներով հավանություն տրված ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություններին ենթակառուցվածքի կառուցման ծախսերի փոխհատուցումը տրվելու է ենթակառուցվածքի կառուցման համար կատարված ծախսերի 100%-ի չափով, բայց ոչ ավելի, քան սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հավելվածի 9-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված սահմանաչափը.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1334-Ա որոշմամբ հավանություն տրված ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպությանը փոխհատուցում տրվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1334-Ա որոշման հավելվածով նախատեսված և դեռևս չկառուցված ենթակառուցվածքների համար, մասնավորապես՝ 1 ենթակայանի և ճանապարհի կառուցման և վերակառուցման համար.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի N 1233-Ա որոշմամբ հավանություն տրված ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից նույն որոշման շրջանակում տրամադրած բանկային երաշխիքը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, իսկ 2023 թվականի հուլիսի 20-ի N 1243-Ա որոշմամբ հավանություն տրված ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից նույն որոշման շրջանակում տրամադրած բանկային երաշխիքը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հետ են վերադարձնում.

8) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանագիրը կնքելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի N 1233-Ա, 2023 թվականի հուլիսի 20-ի

N 1243-Ա և 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1334-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ